Դեսպան Ֆուկուշիման այցելել է 1988թ.-ի երկրաշարժի զոհերի հիշատակի ոգեկոչման արարողությանը

Դեկտեմբերի 7-ին դեսպան Ֆուկուշիման այցելել է 1988թ.-ի երկրաշարժի էպիկենտրոն Սպիտակ՝ մասնակցելու երկրաշարժի զոհերի հիշատակի ոգեկոչման արարողությանը: Արարողությանը ներկա են եղել նաև ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար պարոն Սանոսյանը, ՀՀ Լոռու մարզպետ պարոն Խաչատրյանը, համայնքի ղեկավարի պաշտոնակատար պարոն Նիկողոսյանը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության պաշտոնատար անձինք, այդ թվում փրկարար ծառայության տնօրեն պարոն Գասպարյանը: Նրանք ծաղիկներ են խոնարհել Սպիտակի երկրաշարժի, ինչպես նաև 2011-թ.-ի Արևելյան Ճապոնիայի երկրաշարժի զոհերի հիշատակին նվիրված խաչքարերին՝ աղոթելով երկու երկրաշարժերի զոհերի համար: Դեսպան Ֆուկուշիման, նախարար Սանոսյանը, մարզպետ Խաչատրյանը և համայնքի ղեկավարի պաշտոնակատար պարոն Նիկողոսյանը տեսակետներ են փոխանակել Ճապոնիայի և Հայաստանի համագործակցության վերաբերյալ:

Ներկաները

Դեսպան Ֆուկուշիման ծաղկեպսակ է դնում

Դեսպան Ֆուկուշիման աղոթում է երկրաշարժի զոհերին նվիրված խաչքարի առջև

Հայր Հովհաննիսյանը աղոթում է զոհերի համար՝ Արևելյան Ճապոնիայի երկրաշարժին նվիրված խաչքարի առջև